

Համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության կառավարության
Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական եկամուտների կոմիտեի
ֆինանսների նախարարության կողմից նախագահ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
2012 թ. 19 սեպտեմբերի
N 26



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
ՄԱՆԿ ՃԱՆԱԶՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 30-ի ՀՕ-107 օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 30-ի ՀՕ-107 օրենքի 26-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածի առաջին (եթե իրականացվող գործունեությունն օրենքով ենթակա է լիցենզավորման) և երկրորդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:



Առկա իրավիճակում տարաբնույթ են ընկալվում սնանկ ճանաչված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետությանը պատճառած վնասի հաշվարկում հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների ներառելու հարցը:

Հաշվի առնելով վերը նշվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Սնանկ ճանաչված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետությանը պատճառված վնասը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարները, ինչպես նաև առանց լիցենզիայի օրենքով լիցենզավորման ենթակա համարվող գործունեության իրականացման դեպքում՝ լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:

